ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2021թ. թիվ 852-Ա

Ա. ԱՆՏԻՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշոտ Արմենակի Անտինյանին վերանշանակել «ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում և նրա հետ 2016 թվականի դեկտեմբերի 29-ին կնքած աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի ապրիլի 10-ը ներառյալ՝ մինչև նրա 65 տարին լրանալը:

2. Ա.Անտինյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 30-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

12/20/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Վանաձոր